**ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ**, երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր: Կազմվում են երկրաբանական հանույթի և երկրաբանական այլ աշխատանքների հիման վրա: Տեղագրական քարտեզներում պայմանական նշանների (գունային, նրբագծային, տառաթվային ինդեքսների) օգնությամբ ցույց է տրվում շրջանում հանդիպող ապարների հասակը, տարատեսակները և սահմանները: Նշաններով արտահայտվում են նաև ապարների տեղադրման տարրերը, խզումնային խախտումները, օգտակար հանածոների հանքավայրերն ու երևակումները: Ըստ իրենց բովանդակության և կիրառական նշանակության Ե. ք. լինում են ընդհանուր և հատուկ: Վերջինների վրա ընդգծվում է տվյալ տեղամասի երկրաբանական կառուցվածքի որևէ առանձնահատկություններից մեկը և կատարվում են կիրառական նշանակություն ունեցող ընդհանրացումներ: Ներկայումս օգտագործվում է հատուկ Ե. ք-ի 50-ից ավելի տարատեսակ (օգտակար հանածոների, մետաղածնության, կանխատեսումների, երկրաֆիզիկական, ջրաքիմիական, ջրաերկրաբանական, ինժեներա-երկրաբանական, լիթոլոգիական, ֆորմացիաների, ֆացիաների, նավթագազաբերության): Տարբերում են՝ 1. փոքր կամ ակնարկային (1:500 000 և ավելի փոքր), 2. միջին կամ ռեգիոնալ (1:200 000 և 1:100 000), 3. խոշոր (1:50 000 և 1:25 000), մանրամասն (1:10000 և ավելի խոշոր) մասշտաբների Ե. ք.: